

Այս աւանդութեան համեմատ՝ Տիւզեան մեծահոգի տան ծննդավայրն՝ Փոքր Ասիոյ Սեբաստիա (Սըվազ) քաղաքին արեւելեան կողմը Տիւրիկէ քաղաքը կը գտնենք: Ա՛րսուի թէ Յարութիւն անուն կաթողիկէայ Հայազգին 1600ին պանդխտութեան գաւազանն ձեռք առած, գաղթած ըլլայ անկէ Տաճկաստանի մայրաքաղաքը: Բայց թէ ի՞նչ պատճառաւ, եւ թէ ո՞ր դասակարգին կը վերաբերէր այս Յարութիւն, ահա հարցումներ, որոնց գոհացուցիչ պատասխան չի կրնար տրուիլ: Արդիշէտլ պանդխտն իւր ճարտար արուեստին (անշուշտ՝ ոսկերչութեան) զօրութեամբը, կայսերական պալատան հետ յարաբերութեան կը մտնէ եւ Արսուի ոսկերչի կ'անուանուի: Այսչափ միայն գիտենք, թէ կարի յաջողածնոն գտնուելով յիւրում արուեստին՝ արքունի պալատին մէջ մեծ անուն կը հանէ: Իւր անուամբն ոսկերչի խանութ մը կը բանայ, որ կայսերական գանձատան քով՝ մինչեւ ԺԹ. դարու սկիզբները Տիւզեան անուամբ կանգուն էր մնացած. իսկ բնակութեան տեղն էր Ալանկայ Եէնի-գափուի մօտերը: Բայց ինչպէս քանի մը պարագաներէն կ'երեւայ՝ մանաւանդ եթէ միտ զնենք Տիւզեան գերդաստանին սեպհական հանգստարանի տապանագրերուն վկայութեան՝ ութեւտաներորդ դարէն սկսեալ բուն բնակութեան տեղը՝ Գուրուչէշմէի գիւղաւանն պէտք է նշմարել. վասն զի 1721էն սկսեալ այս ընտանեաց վախճանեալ անգամներն հոն ի հանգիստ կը տարուէին: